

8769

3 K N Y
4 - 97

785

342

9р

լուլեամբներ բոլոր յերկրներից միացեք

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ
ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ՅԵՎ
ԱԳԻՏԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

ԱԴՐԿՈՒՄՀԱՑ
ԲՈԴՈՒ — 1936


24 SEP 2006

ԱԴՐԿՈՒՄԿՈՒՄԻ. (Բ) ԿՈՒՍԱՑԱԿԱՆ
ՊՐՈՊԵՐԱՆԴԻՆ, ԱԳԻՑԱՑԻԱՑԻ ՅԵՎ,
ՄԱՄՈՒԼԻ ԲԱԺԻՆ

1 DEC 2009

ԿՈՒՍԱՑԱԿԱՆ ՊՐՈՊԵՐԱՆԴԻ ՅԵՎ ԱԳԻՑԱՑԻԱՑԻ ՄԱՍԻՆ

Դեկավար նյութերի ժողովածու



785

6207

ԱԴՐԿՈՒՄԿՈՒՄ — ԲԱԳՈՒ — 1986

29.05.2013

8769

ՄԱՏՍԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ
ՊՐՈՊՐԵԴԱՆԴԻ ՄՏՍԿԱՆ
ԸՆԹԱՑՄԱՆ ԲԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄ. Կ (Բ) Կ ԿԵՆՏԱԿՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Համ. Կ (Բ) Կ ԿԵՆՏԱԿՈՒՄՆ ԱՆԹՈւյլատրելի յե համարում մի քանի կուսակցական կազմակերպությունների տենդենցը՝ պրոպագանդիստական աշխատանքն ամառվա ընթացքում սահմանափակելու:

Կուսակցություն քաղաքական – դաստիարակչական աշխատանքը չի կարող «սեզոնային» բնույթ կը բել, այլ պետք է կատարվի սիստեմատիկորեն, ամբողջ տարվա ընթացքում:

Համ. Կ (Բ) Կ ԿԵՆՏԱԿՈՒՄՆ ԱՌԱՋՄԱՐԿՈՒՄ Ե ԿՈՒՍԱԿ ցական կազմակերպություններին՝ առանց կուսակցական դպրոցների ու խմբակների աշխատանքի ավարտման միասնական ստանդարտ ժամկետներ սահմանելու, առանց պլանի թղթե-ձևական կատարման հետեւ վից վաղելու, ապահովել քաղղրագիտության, կուսակցության պատմության և լենինիզմի դպրոցների ու խմբակների ծրագրի լիակատար անցնելը: Կուսակցական կոմիտեները յուրաքանչյուր խմբակի աշխատանքները վերջանալուց հետո պետք է ստուգեն, թե խմբակի անդամներն ինչպես են յուրացրել կուսակցության ծրագրի ու քաղաքականության հիմնական հարցերը, այդ ստուգումն ամենամին չվերածելով քընհությունների:

Թեկնածուական դպրոցներն ավարտածների համար ամենաբնօշտ և ամառվա ընթացքում կազմակեր-



6256-91

պել կուսակցության պատմության հիմնական ետապ ներն ուսումնասիրող խմբակներ՝ խմբակների անդամներին պատրաստելով կուսակցության պատմության հետագա սիստեմատիկ ուսումնասիրման համար, նաև ընթացիկ քաղաքականության և միջազգային դրության հարցերն ուսումնասիրող խմբակներ:

Կուսակցության պատմության սիստեմատիկ դասընթացներն անցած կուսակցության անդամների, համար անհրաժեշտ են կազմակերպել կուսակցության պատմության այն նոտապների ել ապինյի հիմնական ուսումնասիրությունը, վորոնց յուրացումն անհրաժեշտ է կուսակցության անդամներին՝ մեր կուսակցության հաղթանակների պայմաններն ու միջոցներն ըմբռներու համար:

Անհրաժեշտ են համապես պարզաբանել, վոր մարքսիզմը մեզ մոտ աճել ու ամրացել են նարողներության (նարոդվոլյականություն և այլն)՝ վորպես մարքսիզմի ամենակատաղի թշնամու դեմ մղվող պայքարում, և նրա դադարիական դրույթները, քաղաքական պայքարի միջոցներն ու մեթոդները (անհատական տեսոր, վորը բացասառմ և մասսայական կուսակցության կազմակերպումը) ջախջախելու հիմոն վրա:

Անհրաժեշտ են հասնել այն բանին, վորպեսզի կուսակցության անդամները յուրացնեն, վոր մարքսիզմ-լենինիզմն աճել, ամրացել ու հաղթանակել են ախու և առաջ հին նարոդների դեմ մղվող պայքարում, իսկ այնուհետև մենչեւիկների ու եսերների դեմ մըդ վող պայքարում։

Հատկապես անհրաժեշտ են խոր կերպով յուրացնել հետ - հոկտեմբերյան ըրջանի կարևորագույն ետապները և արոցկիզմի դեմ, տրոցկիստական - զինովյեվական խմբակի դեմ, աջ թեքման դեմ, «ձախ» կոմունիստների և այլ հակակուսակցական խմբավո-

րումների դեմ կուսակցության մղած պայքարը։ Այդ ուսումնասիրությունը պետք է կատարվի Լենինի ու ՍՏԱԼԻՆԻ աշխատությունների, կուսակցության համագումարների, կոնֆերանսների ու կենտկոմի պլենումների նյութերի հիման վրա։

Դրա հետ միասին, Համ. կ (բ) կ կենտկոմը հանձնարարում են ստեղծել մարզսիզմ - լենինիզմի կլասիկների առանձին աշխատությունների ուսումնասիրման խմբակներ։

Բոլոր գպրոցների ու խմբակների պարագմունքների ընթացքում պարտավորաբար խմբակի անդամների հետ զրույցներ ունենալ կուսակցության քաղաքականության, միջազգային դրության հարցերի վերաբերյալ, խմբակների անդամներին բացատրելով նըրանց համար անհասկանալի կամ նրանց հետաքրքրող հարցերը։

Քաղցրագիտության գպրոցներ չանցած թեկնածուների համար, նաև համակրողների համար անհրաժեշտ են ստեղծել խմբակներ, վորոնց մեջ, նայած խմբակի անդամների պատրաստականության ու գրադիտության մակարդակին, պետք են դրված լինի մեր կուսակցության կազմակերպության ու աշխատանքի, կուսակցական ծրագրի հիմունքներին ծանոթանալու գործը կամ քաղգրագիտության դասագրքերի հիման վրա, կամ թե փորձված պրոպագանդիստների միջոցով հատուկ զրույցներ անցկացնելով այն մասին, թե ինչպես են կառուցված, ինչպես են աշխատում և ինչ համար են պայքարում մեր կուսակցությունը։

Համ. կ (բ) կ կենտկոմն առաջարկում են յերկրը կոմիներին, մարդկոմներին ու ազգային կոմիուսակցությունների կենտրոնմերին, նաև շրջկոմներին, կոմիտեներին կից կազմակերպել պրոպագանդիստների ու պիտուրների ակտիվ՝ կուսակցական կոմիտեների առաջադրանքով պրոպագանդիստական ու ազիտա-

շիոն աշխատանք կատարելու համար, սիստեմատիկութեն հրահանգելով ու պատրաստելով այդ ակտիվին:

Պրոպագանդիստական աշխատանքի «սեղոնայնության» վերացումը պետք է իր հետ միասին վերացնի նաև պրոպագանդիստների պատրաստման ու վերապատրաստման սեղոնայնությունը և կազմակերպի պրոպագանդիստների սիստեմատիկ պատրաստումն ամբողջ տարվա ընթացքում:

Համ. Կ (բ) Կ կենտկոմը նախազգուշացնում է կուսակցական կազմակերպություններում հաստատված այն պրակտիկայից, յերբ պրոպագանդիստների ամբողջ հիմնական կաղըն սմառված կարճ ժամանակամիջոցում կարվում է պրոպագանդիստական աշխատանքից և բաց է թողնվում հապճեպորեն ու անփոյթ կերպով կազմակերպված, դասասունների գատ ընարված կազմ ունեցող դասընթացներով, վորի հետեւանքով պրոպագանդիստները հարկ յեղած պատրաստությունը չեն ստանում:

Մուտակա ժամանակներս կուսակցական կազմակերպությունների հատուկ ուշադրությունը պետք է ուղղված լինի փուսակցության պատմության և լինինիքի պրոպագանդիստների պատրաստման ու վերապատրաստման դործի վրա:

Անհրաժեշտ է այդ դասընթացներում սովորելու համար ընտրել ստուգված պրոպագանդիստների յեկնարան համար առանձնացնել լավագույն դասառուներ, նկատի ունենալով, վոր առաջին հերթին պրոպագանդիստից և կախաված քաղաքական - դաստիարակչական աշխատանքի մակարդակով կուսակցական դպրոցներում:

ՀԱՄ. Կ (բ) Կ կենտկոմ
«ՊՐԱԿՏԻԿԱ», 14 հունիսի 1935 թ.

ՀԱՄ Կ. (Բ) Կ. ԿԵՆՏԿՈՄՍ

ԿՈՒՍԱԿՑԵՎԱՆ, ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆԴԻ ՎԻՃԱԿԻ ՍՎԵՐԴԻԱՎԱԿԻ ՄԱՐԶԻՒՄ

Համ. Կ (բ) Կ կենտկոմը կուսակցական պրոպագանդի ու պատրաստից բաժնի կատարած ստուգման հիման վրա հաղորդում լսեց Սվերդլովսկի մարզում կուսակցական պրոպագանդի մասին:

Իր վորոշման մեջ Համ. Կ (բ) Կ կենտկոմն արձանագրեց, վոր կուսակցության Սվերդլովսկի մարզկոմը պատշաճ հետեւություններ չի արել Համ. Կ (բ) Կ կենտկոմի՝ «Մոտակա, ժամանակում կատարվելիք պրոպագանդիստական աշխատանքի մասին» վորոշումից, չի ապահովել պատշաճ ղեկավարությունն ու տեղերում կենտկոմի ղերեկտիվների կատարման ժամանակին ստուգումը, իսկ կուսակցության քաղկոմներն ու շրջկոմները, այն եւ կարակովսկի քաղկոմը — քարտուղար Մժիրնով, Նիժնի Տադիլի քաղկոմը — քարտուղար Ռկուջավա, Ռերալմաշ գործարան — քարտուղար Սվերբախ, չեն կազմակերպել կուսակցական դպրոցների ու խմբակների համալրումը կենտկոմի վորոշման համապատասխան. կուսակցական դրաբուցներում ու խմբակներում զրույցներ չեն կազմակերպվում կուսակցության քաղաքականության ու մի ջաղգային դրության հարցերի չուրջը, բավարար չափով չեն պարզաբանվում կուսակցության անդամների համար մութ կամ նրանց հետաքրքրող հարցերը: Կենտկոմի վորոշման իրադարձման համար իսկական հոգատարություն ունենալու փոխարեն, մատնանը-

ված կուսակցական կոմիտեները սահմանափակվել են ընդհանուր բնույթի բանաձեռով ու վորոշումներով։ Քաղկոմների ու ըրջկոմների քարտուղարներն իրենք չեն զրադիլ կուսակցական - պրոպագանդիստական աշխատանքի ղեկավարությամբ, այդ գործը վերահանձնարարելով կուսակցական ապարատի առանձին աշխատողների։

Կուսակցական կոմիտեների քարտուղարները չեն կատարում պրոպագանդիստների ուշաղիր ընտրության ու նրանց սիստեմատիկ հրահանդման վերաբերյալ Համ։ Կ (բ) Կ կենտկոմի քանիցս արած ցուցում ները։

Համ։ Կ (բ) Կ կենտկոմն առանձնապես նշեց պրոպագանդիստական կաղըերի ընտրության ու աճեցման գործի անբավարար դրվածքը։ Սվերդլովսկում պրոպագանդիստների վերապատրաստման մարզային դասընթացները (հուլիս - սեպտեմբեր) մարզկոմն անփույթ եր կազմակերպել։ Վոչ մարզկոմի բյուրոն, վոչ ել մանավանդ կուսակցական պրոպագանդի ու ագիտացիայի բաժնի վարիչ ընկ։ Ուզյուկովը չեն հոգացել այդ դասընթացներն ընդունվող պրոպագանդիստների ընտրության մասին, վորի հետևանքով դասընթացներում սովորողների կես մասը պրոպագանդիստական աշխատանքի համար անպետք են դուրս յեկել։

Կուսակցական պրոպագանդի դրվածքը Սվերդլովսկի մարզում համարելով անբավար և գտնելով, վոր Սվերդլովսկի մարզկոմի ճեռք առած միջոցները գոհացուցիչ չեն, Համ։ Կ (բ) Կ կենտկոմը վորոշում է։

1) Առաջարկել Սվերդլովսկի մարզկոմին՝ մեկ ամսվա ընթացքում հաստատել Ռւբալմաշ գործարանի կարսակովսկի և Նիժնի Տագիլի կուսակադամկերպությունների պրոպագանդիստների կազմը։

2) Առաջարկել Սվերդլովսկի մարզկոմի կուսակցական պրոպագանդի ու ագիտացիայի բաժնին (ընկ. Ուզյուկովին)` յերեք ամսվա ընթացքում կատարել Սվերդլովսկի մարդի պրոպագանդիստների կազմի անձնական հաշվարում և վերանայում։

3) Պարտավորեցնել Համ։ Կ (բ) Կ Սվերդլովսկի մարզկոմին՝ կազմակերպել պրոպագանդիստների մրշտական մարզային դասընթացներ՝ դաստիունների ամբացված կազմով։

4) Պարտավորեցնել Համ։ Կ (բ) Կ Սվերդլովսկի մարզկոմին՝ ըրջաններում կազմակերպել սիստեմատիկ ողնություն պրոպագանդիստներին, նրանց համար կազմակերպելով հատուկ գեկուցումներ, կուսակցության պատմության ու լենինիզմի վերաբերյալ դասախոսություններ, բարելավելով պրոպագանդիստների սեմինարների աշխատանքը և մանավանդ պրոպագանդիստների համար կուսակարինետներում սիստեմատիկ կոնսուլտացիաներ կազմակերպելով։

5) Առաջարկել Կաբակովսկի քաղկոմի քարտուղար ընկ։ Սմիրնովին, Նիժնի Տագիլի քաղկոմի քարտուղար ընկ։ Ոկուջավային և Ռւբալմաշ գործարանի կոմիտեյի քարտուղար ընկ։ Ավերբախին՝ անձամբ ծանոթանալ կուսակցական գլուցների ու խմբակների կազմին ու կատարել նրանց համալրումը՝ կուսակցականների պատրաստության մակարդակին ու պահանջներին համապատասխան։

Պարտավորեցնել ընկ։ Ծնկ։ Սմիրնովին, Ոկուջավային և Ավերբախին, Կենտկոմի ցուցումներին համապատասխան բյուրոնների նիստերում սիստեմատիկաբար հաղորդումներ լսել ինչպես առանձին դպրոցների ու խմբակների աշխատանքի մասին, այնպես ել առանձին պրոպագանդիստների հաշվետպությունները, նույնպես և սիստեմատիկաբար անձամբ հրահանդել պրոպագանդիստներին։

«ՊՐԱՎԴԱ» 28 հոկտեմբերի 1935 թ.

Ա. ՍՏԵՅԿԻ

ՊՐԻՎԵԳՈՒՆԴԻԱՆԵՐԻ ՅԵՎ ԱԳԻԱԱՏԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարկ չկա ապացուցելու ներկայումս կուսակցության մեջ կատարվող գաղափարական-դաստիարակչական աշխատանքի նշանակությունը:

Այդ աշխատանքի դերն ու նշանակությունը բարձրց ընդդժել ե վերջին ժամանակներս: Ընկ. Ստալինը 17-րդ համագումարում պարզ և ճշգրտորեն մատնանշեց, վոր ներկա ենապում անհրաժեշտ ե «ուժեղացնել գաղափարական աշխատանքը կուսակցության բոլոր ողակներում», վոր անհրաժեշտ ե «լենինիզմի անդադրում պրոպագանդ մղել կուսակցության շարքերում»: Այդ ցուցմունքներն իրենց արտացոլումը գրան նաև 17-րդ համագումարի կողմէց ընդունված կուսակցության կանոնադրության մեջ, վորը յուրաքանչյուր կոմունիստի վրա պարտականություն ե գընում՝ «անդադրում կերպով աշխատել իր գաղափարական գինվածությունը բարձրացնելու վրա, մարքսիզմ-լենինիզմի հիմունքները, կուսակցության կարևորագույն քաղաքական ու կաղմակերպչական վորոշումները յուրացնելու վրա, և պարզաբանել դրանք անկուսակցական մասսաներին»:

Մենք անդասակարգ սոցիալիստական հաստիակության շեմքին ենք: Մեր կուսակցության ուսերին ընկած համաշխարհային պատմական խնդիրը—մոռտակատրիներում լիակատար սոցիալիզմի հասնելը, կապիտալիզմի մնացորդների վերացումը վոչ միայն եկոնոմիկայի, այլև մարդկանց դիտակցության միջից—եւ

ավելի մեծ կազմակերպվածություն, կարգապահություն ե պահանջում կուսակցության անդամներից պահանջում ե նաև մեծադույն դիտակցություն, մարքսիզմ-լենինիզմի տեսության իմացություն, մեր կուսակցության պատմության իմացություն:

17-րդ համագումարից հետո կուսակցական պրոպագանդն զգալիորեն ընդարձակվեց: Պրոպագանդիստական խմբակները, վորոնք զբաղվում են կուսակցության քաղաքականության հիմունքների, նրա պատմության ուսումնասիրությամբ, լենինիզմի ուսումնասիրությամբ, ներկայումս ընդգրկում են կուսակցության միջինության ավելի անգամներ ու թեկնածուներ և համակրողներ: Այդ խմբակներն աշխատում են ավելի կանոնավոր, ավելի հիմնավոր են անցնում իրենց դասընթացը:

Սակայն պրոպագանդի գործը դեռ վերին աստիճանի ցածր մակարդակի վրա յե զանվում: Նա զեռ չի գրված կուսակցական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: Դեռ չկա ամենորյա հոգատարություն՝ կուսակցական պրոպագանդի ու ագիտացիայի ճիշտ կազմակերպման և նրան ճիշտ ուղղություն տալու նկատմամբ:

Հենց իրենց խակ՝ պրոպագանդիստական խմբակների ներսում շպտ զպրոցականություն կա, սխորատիկա, կտրվածություն քաղաքական խնդիրներից և կուսակցության ներկայումս մղած պայքարից:

Համ. Կ(ր)Կ կենտրոնի վորոշումները, լենինգրադի քաղկոմի պլենումի 1935 թվի մարտի 29-ի վորոշումը նշեցին պրոպագանդիստական աշխատանքի հիմնական թերությունները՝ թե՛ նրա կազմակերպման տեսակետից, թե՛ նրա ելության տեսակետից, առանձնապես կուսակցության պատմությունն ուսումնասիրեւու վերաբերյալ:

«Մոտակա ժամանակում կատարվելիք պրոպագան

Դիստական աշխատանքի մասին» կենտկոմի վորոշման ժեղ տեղական կազմակերպությունների ուշադրությունը նը հրավիրվում է նաև պրոպագանդի դրվածքի վճռա կան ողակի վրա։ Կենտկոմը տեղական կազմակերպություններին հանձնարարում է՝ ուշադիր կերպով հոգ տանել պրոպագանդիստների բնտրությանը և պատրաստմանը, «նկատի ունենալով, վոր պրոպագանդիստից ե առաջին ենքին կախված դպրոցներում ու խրմակներում կատարվող բաղայիկան-դաստիարակչական աշխատանքի մակարդակը»։

Այս գրույթը՝ սրանից բղխող բոլոր յեզրակացություններով՝ պետք ե հաստատապես յուրացվի կուսակցական կազմակերպությունների կողմից։ Պրոպագանդի գաղափարական մակարդակը, նրա վորակը, նրա հաջողությունը, մարքսիզմ – լենինիզմի տեսության, կուսակցության պատմության, նրա քաղաքականության հիմունքների յուրացումը կուսակցության անդամների կողմից, կախված ե առաջին հերթին նրանից, թի ո՞ւմ ե հանձնարարվում կուսակցական խրմակների ու դպրոցների ղեկավարությունը, կախված է պրոպագանդիստից։

Այդ մասին են խոսում գաղափարական-դաստիարակչական աշխատանքի ամբողջ փորձը և լենինի ու Ստալինի բազմիցս արտահայտած մտքերը։

* * *

Գաղափարական – դաստիարակչական աշխատանքի թափը, կուսակցական դպրոցների ու խմբակների ցանցի ընդարձակումը, այդ աշխատանքն ել ավելի բարձր մակարդակի հասցնելու խնդիրները, հատուկ ուշադրություն են պահանջում կուսակցական կազմակերպություններից՝ պրոպագանդիստների բնտրության, նրանց մեջ աշխատանք կատարելու, նրանց ողնելու նկատմամբ։

Անցյալ տարվա սեպտեմբերին կենտկոմն իր վորոշ

ման ժեղ առաջարկեց շրջկոմներին՝ հատուկ հանձնաժողովներ ստեղծել պրոպագանդիստների ընտրություն կատարելու համար և պրոպագանդիստների կազմը հաստատելու շրջկոմների բյուրոներում։

Կենտկոմի այդ վորոշումը կազմակերպությունների մեծ մասում չի կատարվում։ Յեվ այդ չի կատարվում հենց մեր կուսակցության առաջավոր արդյունաբերական կազմակերպություններում։

Վորպես կանոն, պրոպագանդիստների առաջքայնությունը կատարվում ե կուսակցական ապահատի ոժանդակակիներում։ Պրոպագանդիստների ընտրություն ե վոչ թե կուսակցական կոմիտեյի քարտուղարը, և նույնիսկ վոչ թե կուլտուրոպի վարիչը, այլ կուսակրինետի վարիչն ու ցեխի կուսակցմակերպիչը։ Յեթե պրոպագանդիստները թեկուզ և հաստատվում են կուսակցական կոմիտեյի բյուրոյի կողմից, ապա այդ հաստատումը կատարվում է ձեւականորեն։ Իրավականում վո՛չ կուսակցական կոմիտեյի քարտուղարը, վո՛չ առավել ևս շրջկոմի քարտուղարը, չեն ճանաչում իրենց պրոպագանդիստներին, չեն ստուգում նրանց աշխատանքը և ծիշտ նույնպես ել՝ ողնություն ցույց չեն տալիս նրանց։

Կուսակցական կոմիտեյի քարտուղարն իր կուսակցական պարտականությունն ե համարում – և դա մենդամայն ճիշտ եղեմքով ճանաչել յուրաքանչյուր կուսակցմակերպչի և կանոնավոր կերպով խորհրդակցություններ անցկացնել նրանց հետ։ Բայց յերբ խոսքերաբերում ե պրոպագանդիստներին, ապա քարտուղարը առվորքաբար ուղարկում ե կուսակցությունը վարիչի մոտ։

Այսպիսի վերաբերմունքն այն կադրերի ընտրության ու ղեկավարման նկատմամբ, վորոնք փոքր դեր չեն խաղում գաղափարական-դաստիարակչական աշխատանքում, և սկայական վտանգ և պարունակում։

Կուսակցական պրոպագանդի ցանցն ընդարձակվում ե, առանձնապես կուսակցության պատմության խմբակների գծով: Իսկ հաճախ այդ խմբակների ղեկավարներ են դատում այնպիսի մարդիկ, վորոնք իրենք չենց չփառեն կուսակցության պատմությունը, վորոնք իրավում են տարրական հարցերի մեջ, վորոնք վարկարեկում են կուսակցության պատմության դասվանդումը, իսկ յերբեմն ել նաև կուսակցության պատմության այդ ուսումնասիրությունը չարամտուին ուղղում են լենինիզմի դեմ:

Պրոպագանդիստական աշխատանքի վիճակի հետ ձանոթացումը հարցուրավոր որինակներ և տալիս այն մասին, թե պրոպագանդիստների անբավարար ընտրության հետևանքով ինչպես և աղավաղվում լենինիզմի պրոպագանդը:

Այդ անբավարար ընտրությունն անդրադառնում ե նաև պրոպագանդիստների դասընթացների ձեւավորման վրա: Այդ դասընթացներն են ընկնում այնպիսի ընկերներ, վորոնք վոչ մի կազ չունեն պրոպագանդի հետ, այդ գործի համար պիտանի չեն, իրենք չենց դուրկ են կուսակցության պատմության և լենինիզմի վերաբերյալ տարրական գիտելիքներից: Դրա հետևանքով պրոպագանդիստների դասընթացների աշխատանքն զգալիորեն դատարկ և անցնում:

Դա առաջ ե գալիս այն բանի հետևանքով, վոր կուսակցական կազմակերպություններն այստեղ խախտում են բոլշևիկյան աշխատանքի հիմնական սկզբունքներից մեջը — Հոգ չեն տանում մարդկանց ընտրության նկատմամբ, անուշադիր են վերաբերվում այնպիսի ընկերների հայտնաբերմանը, վորոնք ընդունակ են մարքսիզմ՝ լենինիզմի պրոպագանդ մղելու համար:

Կուսակցական կազմակերպությունները մոռանում են պրոպագանդիստների ընտրության նշանակու

թյան մասին լենինի տված ցուցմունքը՝

«Ի՞ դեպ, պրոպագանդիստների առթիվ յես կունելի մի քանի խոսք ել ասել. այդ պրոֆեսիան քիչ ընդունակ մարդկանցով սովորաբար չափից ավելի լցնելու և դրանով պրոպագանդի մակարդակն իշեցնելու դեմ: Մեզնում յերեմն ամեն մի ուսանող՝ առանց ընտրության՝ պրոպագանդիստ և համարվում, և ամբողջ յերիտասար դուրյունը պահանջում ե, վոր իրեն «խմբակ տան» և այլն: Այս բանի դեմ պետք ե պայքարել, վորովհետև դրանից խիստ շատ վնաս ե լինում: Իսկապես սկզբունքորեն կայուն և ընդունակ պրոպագանդիստներ շատ քիչ կան (և այդպիսին դառնալու համար հարկավոր ե կարգին ու վորել ու փորձ կուտակել), և այդպիսի մարդկանց հարկավոր ե մասնագիտացնել, ամբողջովին զբաղեցնել նրանց և ըստ ամենայնի խնամել»: (Լենին, յերկեր, հատ. 5-րդ, էջ՝ 185. «Նամակ ընկերոջը. մեր կազմակերպչական խոնդիրների մասին»):

Պրոպագանդի ու ագիտացիայի ամբողջ ապարատը պետք ե գործի վորպես կենդանի քաղաքական ապարատ, վորն արագորեն արձագանքում և կուսակցականների ու անկուսակցական բանվորների մեջ առաջացող բոլոր հարցերին ու տարակուսանքներին, ճշշտիվ լուսաբանում և նրանց այդ հարցերը և կուսակցության դիմը:

Այդ բանը դեռ չկա: Ամենուրեք պարագմունքները խմբակներում և դպրոցներում այնպես են տարվում, վոր գործը սահմանափակվում և դասագրքի այս կամ այն եջը կարգալով ու բացատրելով:

Պրոպագանդիստը վոչ միայն չի ջանում պարզել, թե ինչպիսի հարցեր ունեն ունկնդիրները, այլ համար խուսափում և այդ հարցերից, հեռացնում և

այլ հարցերն այն պատրվակով, թե դրանք չեն համապատասխանում պարագմունքի պլանին, կամ նույն իսկ հարձակվում ե կուսակցականների վրա նրա համար, վոր նրանք «կողմնակի» հարցեր են տալիս:

Սա վոչ այլ ինչ ե, յեթե վոչ պրոպագանդի ամենաանթույլատը լի խեղաթյուրում, պրոպագանդիստա կան աշխատանքի բյուրոկրատացում:

«Մոտակա ժամանակում կատարվելիք պրոպագանդիստական աշխատանքի մասին» կենտկոմի վորոշան մեջ կան յերկու վերին աստիճանի եյական կետեր, վորոնք մտցված են ընկեր ՍՏԱԼԻՆԻ ուղղակի շուցմունքների հիման վրա.

«Բոլոր դպրոցների ու խմբակների պարագմունքների ընթացքում անպայմանորեն զրոյցներ անցկացնել խմբակների անդամների հետ՝ կուսակցության բաղադրականության և միջազգային դրության հարցերի վերաբերյալ, խմբակի անդամներին պարզաբնելով այն հարցերը, վորոնիք նրանց համար պարզ չեն, կամ վորոնիք հետաքրքրում են նրանց»:

Յեկ յերկրորդ՝

«Համ. Կ(ր)Կ կենտկոմի առաջարկում ե յերկոմներին, մարզկոմներին ու ազգային կոմիտասկցությունների կենտկոմներին, ինչպես նաև շրջկոմներին՝ կոմիտեներին կից կազմակերպել պրոպագանիստների ու ազիտատորների ակտիվ, կուսակցական կոմիտեների առաջադրանքով պրոպագանդիստական ու ազիտացիոն աշխատանք կատարելու համար, սիստեմատիկաբար հրահանգելով ու պատրաստելով այդ ակտիվը»:

Այս յերկու ցուցմունքները սերտորեն կապված են իրար հետ: Յեկ այդ յերկուսն ել տեղական կազմակերպությունների կողմից՝ ինչպես այդ ցույց ուր վեց Դռնեցի, Սվերդլովի և այլ մարզերի մի շարք

ՀՀ մաներում կատարված հետազոտությունը՝ դեռ չեն կատարվում:

Շատ աշխատովներ կարծում են, վոր բավական է միայն պրոպագանդիստների ու ազիտատորների յուցակ կազմել — և ամեն ինչ կարգին լինի: Բավական է միայն այդ գեկուցողներին ու պրոպագանդիստներին քաղաքական կամպանիաների վորոշ մոմենտներում գեկուցումներով ձեռնարկություններն ու կուտնական նույնականություններն ուղարկել, և ազիտացիոն պրոպագանդիստական աշխատանքի խնդիրները դրանով լիովին սպառված կլինեն:

Դա բարորովին ել այդպիս չե:

Կուսակցական կազմակերպությունները պետք ե միշտ տեղյակ լինեն այն հարցերի մասին, վորոնիք հուզում, զբաղեցնում են բանվորներին ու կոլտնտեսականներին, վորոնիք պարզ չեն նրանց համար և վորոնիք վերաբերյալ նրանք պատասխան են պահանջում:

Անհեթեթություն, ծիծաղելի կլիներ կարծել, թե ընդհանուր գեկուցումները, հանդիսավոր գեկուցումները, վորոնիք արվում են այս կամ այն քաղաքական կամպանիան անցկացնելու կարգով, սպառում են այդ բոլոր հարցերը: Վոչ: Դրա համար անհրաժեշտ ե ավելի ճկուն մտեցում, դրա համար անհրաժեշտ ե ի մասաւ, հաշվի առնել մասայի այդ բոլոր բազմազան պահանջները և ներքին, և արտաքին դրության բոլոր մոմենտների վերաբերյալ՝ այդ պահանջներին ճիշտ ու ժամանակին արձագանքելու համար: Կուսակցական ազիտացիոն պրոպագանդիստական աշխատանքի այս կարևորագույն կողմը մոռացված ե կուսակցական շատ դեկապարների կողմից:

Իսկ մինչդեռ դա ամենաերական նշանակությունն ունի մասսաների բարաքական դաստիարակությունը՝ դործում, նրանց զեկուլարման դործում:



Յեթե կուսակցական կազմակերպությունները չեն կարողանում պատասխանել և չեն պատասխանում բանվորներին ու կուսակցականներին հուզող հարցերին, ապա մարդիկ սկսում են սնվել շըռկներով յեվ այստեղ նպաստավոր ասպարեզ և բացվում թշնամիների գործունեյության համար: Նրանց հենց այդ ել հարկավոր ե: Եսվ նրանք ոդտվում են այդպիսի մոժենտից, ամեն տեսակ հերցուրանքներ տարածելու և կուսակցության քաղաքականությունը վարկաբեկեռու համար:

Պրոպագանդիստների ու ագիտատորների ակտիվ պետք և գործի վորպես քաղաքական կենդանի ավարատ: Նա պետք և գործի մշկությունների ցուցմունքներով: Յեթե վորուե ձեռնարկության սեջ ընկերները չեն հասկացել ասենք՝ պատարի հարցը, և յուսում խոսակցություններ են տեղի ունենում միասնական ճակատի սասին և տեղական կազմակերպությունը չի կարողանում հեղինակավոր կերպով, միշտ պարզաբանել այդ հարցերը, յեթև մի յերրորդ տեղում վորուե տարակուսանք և ծագել աշխատավարձի հարցերի շուրջը, կամ թե բանվորներն ու կոլտնտեսականները պահանջում են պարզաբանել Սահմանադրության մեջ մտցված փոփոխությունները, կամ լրտարանել միջազգային դրության հարցերը — կուսակցական կազմակերպությունները պարտավոր են արագորեն արձագանքել այդ հարցերին, գործելով պրոպագանդիստների ու ագիտատորների ակտիվի միջոցով:

Յեվ այստեղ անհրաժեշտ և ոգտվել բազմապիսի մեթոդներից: Յերբեք պարտադիր չե, վոր ագիտատություն ու պրոպագանդիստը միշտ հանդես գան զեկուցով դերում: Նա կարող ե զբույյներ անցկացնել, նա կարող է ուղղակի պատասխանել այն հարցերին, վոր տրվում և նրան ժողովում: Նա կարող ե հրահանգել աեղական ակտիվին, վորպեսզի այդ ակտիվին ինքը

շարունակի բացատրական աշխատանքը: Բայ վորում՝ ինչպես փորձը ցույց է տալիս, այդ տեսակետից առավել արժեքավոր են ձեռնարկության հասարենակները, այն բանվորներն ու կոլտնտեսականները, վորոնք ճանաչում են մասսային, վորոնց նույնպես մասսան ճանաչում և ու հարգում, և վորոնք իրենք հենց կարողանան ամեն ինչ պատմել այդ մասսային, ինչպես հարկն ե:

Նույնը պետք է ասել և պրոպագանդիստների ակտիվի մասին:

Տեղական պրոպագանդիստները հաճախ չեն կարող անում պատասխանել այս կամ այն հարցին: Ներկայումս այնպիսի կարգ գոյություն ունի, վոր այդ հարցերն առհասարակ լավագույն դեպքում մնում են առանց պարզաբանման: Իսկ կան նաև այնպիսի յեռանդուն պրոպագանդիստներ, վորոնք չհամարձակվելով ուղղակի վասել, վոր հենց իրենք ել չգիտեն այդ, հարձակվում են հարց տվող կամ իր տարակույսն արտահայտող ընկերոջ վրա, ճգնում են լրեցնել նրան կոպիտ աղաղակով, կամ թե սպառնում են նրան մեղադրել թեքման մեջ:

Մրանք — խայտառակ դեպքեր են:

Իրականում յուրաքանչյուր պրոպագանդիստ պետք և ամենառաջադիր վերաբերմունք ցույց տա ուն կընդիրների հարցերին ու տարակույսներին: Յեվ յեթե նա ինքն ու տեղական կուսակցական կազմակերպությունը չեն կարողանում պարզաբանել կուսակցության պատմությանը կամ տեսությանը, կամ նրա քաղաքականությանը վերաբերող այդ տարակույսները, — նա պետք և դիմի մշկումին:

Յեվ այստեղ ոգնության պետք և գան ավելի փորձված, ավելի բանիմաց ընկերները՝ պրոպագանդիստների ու ագիտատորների ակտիվից:

Այսպիսով այդ ակտիվի դերն ամեննեին չի հան-

կում հանդիսավոր որերին զեկուցումներ տախուն։ Այդ ակտիվի խնդիրները նաև չեն սահմանափակվում՝ միայն տեղական պրոպագանդիստներին ու ազիտատորներին հրահանգելով։

Այդ ակտիվի խնդիրներն են — շրջկոմի ու վերադաս կուսակցական մարմինների ցուցումներով, ամենորյա ազիտացիա ու պրոպագանդ մղել, արձագանքի լով մասսաների պահանջներին, պատասխանելով նըրանց, ողնության դաշլով նրանց՝ կուսակցության քաղաքականությունը պարզաբանելու դործում։

Համ. Կ(ր)Կ կենտկոմի կուսակցական պրոպագանդի ու ազիտացիայի բաժնի ունեցած տեղեկություններով, կուսակցական պրոպագանդի ու ազիտացիայի վորոշ զեկավարներ՝ մարզերում մինչև այժմ գեռ նեղություն չեն քաշել ինչպես հարկն և մտածելու պրոպագանդիստների ու ազիտատորների ակտիվ ստեղծելու վերաբերյալ կենտկոմի ցուցումի իմաստի ու նշանակության մասին։ Նրանցից վոմանք պրոպագանդիստների ու ազիտատորների ակտիվի ամբողջ աշխատանքը հանդեցնում են զեկուցումների, գասախոսությունների և ամենաշատը՝ կուսակցական լուսավորության ցանցի դպրոցների ու խմբակների զեկավարների հրահանգավորմանը։ Իսկ վոմանք ել, ինչպես ուրինակ, Համ. Կ(ր)Կ վորոնեժի մարզկոմի կուլտպրոպագանդի վարիչ ընկ. Գենկինը, գտնում ե, վորմարզկոմին կից ակտիվ ստեղծելու խնդիրն ըստ եյտթյան արդեն կատարված ե, վորովհետեւ ակտիվ «վաղուց գոյություն ունի» հանձինս զեկուցողների, հրահանդիչների և այլն։ Մնում է միայն լայնացնել այդ «վաղուց արդեն գոյություն ունեցող ակտիվը»։ Իսկ իրականում Վորոնեժի մարզկոմին կից այնպիսի ակտիվ, վորի մասին խոսվեց վերևում, չկա։ Կա զեկուցողների ու հրահանգիչների ցուցակ՝ քաղաքական

կամպանիան անցկացնելու համար։ Ի դեպ ընկ. Գենկինին ինքը հայտարարում է, վոր մարզկոմին կից յեղած այդ ակտիվի վրա զբաված են «նույն խնդիրները, ինչ վոր առաջ»։ Իսկ այն մասին, թե ինչ ե կատարվում շրջաններում՝ ակտիվ կազմակերպելու վերաբերյալ կենտկոմի ցուցումը կատարելու խմասով, ընկեր Գենկինին վոչինչ հայտնի չե։

Ճիշտ նույն դրությունն ե տիրում Բելոռուսիայում։ Բելոռուսիայի Կ(ր)Կ կենտկոմի կուլտպրոպագանդի վարիչ ընկ. Կոնիկը Բելոռուսիայի Կ(ր)Կ կենտկոմին կից յեղած պրոպագանդիստների ու ազիտատորների ակտիվի խնդիրներն ըստ եյտթյան հանդեցնում ե սովորական գասախոսական խմբակի Փունկցիաների։ Թե իսկապես ի՞նչ դրություն ե տիրում շրջաններում՝ պրոպագանդիստների ու ազիտատորների ակտիվ ստեղծելու դործում, այդ մասին ընկ. Կոնիկը նույնպես չգիտե, և յենթադրում է, թե այժմ շրջաններում պրոպագանդիստների ու ազիտատորների ակտիվը, վոր նրա ամելով «միշտ ել այնտեղ կար», լայնացել ե։ Ըստ վորում ընկ. Կոնիկն այդ ակտիվի իրն գիրն ե համարում «գասավանդումը խմբակներում և ընթացիկ քաղաքականության հարցերի շուրջը զեկուցումներ կարգալը»։

Մի շաբթ (ավելի քան տասը) մարզերից ու յերկրամասերից հավաքած տեղեկությունները ցույց են տալիս, վոր կուսակցական կազմակերպությունների զեկավարները հարկ յեղած նշանակություն չեն տվել պրոպագանդիստների ու ազիտատորների ակտիվ ըստեղծելու վերաբերյալ կենտկոմի ցուցումին։ Վորոշ գենգերում այդ ցուցումն ամենաին կատարված չե, այլ զեպքերում ձևականորեն են մոտեցել պրոպագանդիստների ու ազիտատորների ակտիվ ստեղծելուն։ Դեռ վոչ մի տեղ պրոպագանդիստների ու ազիտատորների ակտիվին ինչպես հարկն ե չի ծավալել իր աշխատանքում։

տանքը : Նույնիսկ այնպիսի առաջավոր կադմակերպություններում, ինչպիսիք Մոսկվայի ու Լենինգրադի կազմակերպություններն են, այդ տեսակետից առաջին քայլերն են միայն կատարում :

Մարզային ու յերկրամասային կադմակերպությունների ղեկավարների որբնակին են հետևում նայել կուսակցության քաղկոմներն ու շրջկոմները : Արմերդուղմակի մարզկոմի կուլտպրոպարաժնի վարիչ ընկեր Ուզգուկովը հաղորդում ե, փոր Սվերդովսկի մարզում, մի շարք տեղերում «ըշկոմներին կից գոյություն ունեցող «լիազորների» ակտիվը փորձում են մեխանիկորեն, առանց անձնական ընտրության, «վերափոխել» պրոպագանդիստների ու ազիտատորների ակտիվի» : Իսկ Յարոսլավլում նույնիսկ այդ ել չկա: Այնտեղ միայն կա ղեկուցողների ու կուսակցական լուսավորության ցանցի գպրոցների ու խմբակների ղեկավարների ակտիվ՝ կուսկարինետին կից :

Այսպիսի դրությունը պրոպագանդիստների ու ազիտատորների ակտիվ կազմակերպելու դործում, չի կարող հանդուրժելի լինել: Անհրաժեշտ ե հիշել, մոր առանց պրոպագանդիստների ու ազիտատորների ակտիվ ստեղծելու, ակտիվ, փորը պետք ե գործի ինչպես քաղաքական կենդանի մի ապարատ, անհնարին լրջորեն բարելավել ադիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքը :

«ՊՐԱՎ.ԴԱ.», 22 սեպտեմբերի 1935 թ.

Ա. ՌԵՑԿԻ

ԿՈՒԽՏՊՐՈՊԿԵՐԻ ՎԵՐԾԿՐՈՌԻՑՈՒՄԸ
ՅԵՎ ԿՈՒՍԿՑԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ՈՒ
ԱԳԻՑԱՑԻԱՅ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Համ. Կ(թ)Կ կենտկոմի 1935 թվի մայիսի 14-ի գործումով վերակառուցված ե Համ. Կ(թ)Կ կենտկոմի կուլտուրայի և լենինիզմի պրոպագանդի բաժինը: Կուլտպրոպի փոխարեն Համ. Կ(թ)Կ կենտկոմի ապարատի կազմում ստեղծված են հինգ բաժիններ. 1. Կուսակցական պրոպագանդի և ազիտացիայի բաժին, 2. Մամուլի և հրատարակչության բաժին, 3. Դպրոցների բաժին, 4. Կուլտուր - լուսավորական աշխատանքի բաժին, 5. Գիտության, գիտա - տեխնիկական գյուտարարությունների և հայտնագործումների բաժին: Ընկեր ՍՏԱԼԻՆԻ նախաձեռնությամբ իրագործված այս վերակառուցումը նշանակում է քաղաքական - դաստիարակչական, ագիտացիոն, գիտական և կուլտուր - լուսավորական աշխատանքի, դպրոցի և մամուլի կուսակցական ղեկավարության ահմագին ամրապնդումը:

Ինչո՞վ ե պայմանավորված այս վերակառուցումը:

Վերջին տարիների ընթացքում աեղի յե ունեցել կուլտուրայի ահագին անում, ինչպես քառարում, այնպես ել գյուղում կուլտուրական հիմնարենու ցանցի, և ենտրոպում և տեղերում գպրոցների, ԲՈՒՀ-երի և ԲՏՈՒՀ-ների, գիտա-և տառապուտական ենստիտուտների ցանցի ընդլայնում: Տարեց տարի մեծանում ե կ-

սակցության և կոմյերիամբության ներսում կուսակցական-դատավարակչական աշխատանքի նշանակությունը և ընդլայնվում է նրա ծավալը, մարզսիդմ - ւնինիզմի պրոպագանդի դործը:

Ներկայումս կուսակցական պրոպագանդի ցանցն ընդգրկում է կուսակցության ավելի քան մեկ միլիոն անդամներ և թեկնածուներ: Դպրոցների և խմբակների այդ ահազին ցանցում քաղաքում և գյուղում աշխատում են շատ տառնյակ հազարավոր պրոպագանդիստներ: Միայն Մոսկվայում աշխատում է 20.000 պրոպագանդիստ, նրանցից 12.000-ը կուսակցական լուսավորության ցանցում, մնացածները՝ կոմիտեիտական և պրոֆմիութենական դպրոցներում: Լենինգրադում կուսակցական դպրոցներում աշխատում է մոտ 10.000 պրոպագանդիստ:

Մամուլը ևս ճիշտ նույնպես ներկայացնում է ներկայումս կուլտուրայի և պրոպագանդի ահազին ինքնուրույն մի ճյուղ: 1934 թ. հրատարակված է 44.600 անուն գիրք՝ գրա-ամսագրային արտադրանքի ամբողջ ծավալն այս տարի հասնում է չորս միլիարդ տպածքերի:

1930 թվին կար մոտ 3000 լրագիր՝ 22,3 միլիոն որինակ միանվագ տիրաժով: Ներկայումս հաշվվում է մոտ 10.000 տպագրվող լրագիր 36-37 միլիոն որինակ միանվագ տիրաժով: Բացի այդ զոյտություն ունեն բրիգադային թերթեր, պատի թերթեր և այլն:

Ինչպես թերթերում, այնպես ել հրատարակչություններում մամուլի աշխատողների կալերի ընտրության և պատրաստման հարցն այժմ առանձին կարելու նշանակություն և ստանում: Պահանջվում է մամուլի ուշադիր, ամենորյա կուսակցական դեկավարում, վորպեսզի ապահովի գրքերի, թերթերի, ամսագրերի բարձր վորակը, դրանց տոկունությունը և դրանց մեջ կուսակցության գծի անցկացումը:

Կուլտուրը լուսավորական աշխատանքի առանձին ձյուղերի գծով գործը հետևյալ կերպ է պատկերանում: Ներկայումս Խորհրդային Միության մեջ կան 121.263 տարրական գպրոցներ սովորողների 10671000 թվով՝ 29-315 վոչ լրիվ միջնակարգ գպրոցներ (7 դասարան) սովորողների 8.959.000 թվով՝ 3.900 միջնակարգ գպրոցներ (10 դասարան) սովորողների 3117000 թվով: Ընդամենը տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ գպրոցներում դաստիարակվում են 22.747.000 սովորողներ:

ԲՈՒՀ-ԵՐԻ և ԲՏՈՒՀ-ԵՐԻ թիվը բոլոր ճյուղերի գծով կազմում է ներկայումս 682 միավոր՝ 513.000 ուսանողներով (1928 թվի 160.000-ի դիմաց): Սրան անհրաժեշտ և ավելացնել, վոր 1935 թվի վերջին տեսնիկումներում սովորելու յեն 804.000 և բանֆակներում 330.000 սովորողներ:

Այսպիսով, բարձրագույն կրթությունը, նույնպես, ինչպես և տարրական ու միջնակարգը, գարձել են կուլտուրայի և գաստիարակության ահազին ինքնուրույն մի ճյուղ, վորն ընդգրկում է շատ միլիոն յերիսաներ ու յերիսասարդություն:

Քաղ-լուսավորական հիմնարկների ցանցը ներկայումս Միության մեջ հաշվում է՝ 8875 քաղաքային ակումբներ, 34.240 խրճիթ-ընթերցարան, 16.652 կունուսային ակումբներ, 113.363 ստացիոնար գրադարան և 102.067 շրջիկ-գրագարան 294 միլիոն հատոր գրքի փոնդով: Դրան հարկավոր և ավելացնել 30.600 ստացիոնար կինոուստանովկամները, 619 թատրոնները, կրկեսները և այլն՝ 290 միավոր, վերջապես,՝ 67 ուղիուազորդման կայանները և 2.300.000 ուաղիսկերը, ահազին թվով լուսավորական և ինքնազործունյա խմբակները, գաւառնթացները, գպրոցները հասկավորների համար և այլն:

Ինչ վերաբերում է գիտական աշխատանքին, ա-

պա ԽՍՀՄ-ում գոյություն ունեն ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիա՝ իր ինստիտուտներով և ֆիհաներով տեղերում, փորոնք ունեն 1.500 գիտական աշխատուներ, կոմունիստական Ակադեմիա, ՈՒՍԽՀ յեզ ԲՍԽՀ գիտությունների ակադեմիաներ : Բնդամենը Մի ուժան մեջ համարում է 973 գիտա - հետազոտական հիմնարկ՝ 40.000 գիտական աշխատողներով :

Եերկրում գիտությունների և տեխնիկայի աճման, սոցիալիստական ինդուստրիայի զարգացման, գյուղական տնտեսության վերելքի և հետագա մեքենայացման ինդիրների կապակցությամբ ամենի ու ավելի մեծանում է գիտա-հետազոտական հիմնարկների, նոր հայտնագործումների ու գյուտերի ռեռոր, գյուտարարական աշխատանքի զարգացման նշանակությունը :

Կուս-դաստիարակչական և կուլտուրական աշխատանքի հիշյալ բնագավառներից յուրաքանչյուրը վերածել է ներկայումս աշխատանքի խոչը հնքնուրույն ճյուղի, իր նկատմամբ պահանջում է ամենուրա ուշագրություն, պահանջում է կուսականական ղեկամարություն : Անհին աւա աշխատանքի ղեկամարման միասնական կենտրոններ չկան : Կուլտուրական և գիտական աշխատանքի ղեկամարությունն ապակենտոնաց ված ե և իրագործվում է խորհուրական կառույց՝ առանձին ազգային հանրապետությունների գծով (դրա բոցներ, կուլտուր - յուսագորական աշխատանք), առանձին ժողկոմատների գծով (ԲՌԻՀ-եր, ԲՌՈՒՀ-եր, գիտա - հետազոտական աշխատանք), յեվ նույնիսկ առանձին մառերի գծով (մամուլո) :

Կուսականական ամրատում կույսուրական աշխատանքի մի շարք ճյուղեր - ԲՌԻՀ-երն ու ԲՌՈՒՀ-ներո, գիտա-հետազոտական աշխատանքը - ռաժանված էնէիշտ նույնպես բատ ճյուղային բաժինների :

Ինչ վերաբերում է կուլտուրայի և լենինիզմի պրո

պատանդի բաժնին, ապա այս բաժինը, վորը միացնում եր կուս-լուսավորական և կուլտուրական աշխատանքի կարելորագույն ճյուղերը, դարձել եր կուսակցական ապարատի ամենաունիվերսալ բաժինու : Այս բաժինն զբաղվում եր և' դպրոցների ու ԲՌԻՀ-երի հարցերով, և' պրոպագանդով, և' մամուլով, արքեստով, առողջապահությամբ, գիտական աշխատանքով ու գիտա-հետազոտական հիմնարկներով, կուլտուր-լուսավորական աշխատանքով :

Բոլոր այս նյուղերո վերջին տարիներու ընթացքում այնպիս ծավալվեսին, վոր Համ. Կ(ր)Կ կենտրոնի կուլտուրայի և լենինիզմի պրոպատամունի բաժինու, ընականարար, իրերի լոգիկայով, ի վիճակի չեր վերջին ժամանակներու գլուխ բերել աշխատանքի բոլոր այս անուն ու մեծագած նյուղերի հակոդության և վերահսկողության գործը, ի վիճակի չեր իրագործել դրանց ամենորյա գիշավարումը :

Այսպես, վերջին ժամանակներս լուրջ թերություններ ու բացեր յերևան բերվեցին մառքսիզմ-լենինիզմի պրոպագանդի դրվագքում, առանձնապես կուսակցության պատմության ուսումնասիրության դրվագքում : Վոչ պակաս լուրջ թերություններ են յերեվան բերված ԲՌԻՀ-երի, ԲՌՈՒՀ-ների և տեխնիկումների քաղ-դաստիարակչական և ուսումնական աշխատանքում, վորը վկայում է ժողկոմատների կողմից, առանձնապես լուսժողկոմատների կողմից այդ գործի անբավարար ղեկավարման մասին :

Բոլոր այս պայմաններն ել հենց առաջացրին Համ. Կ(ր)Կ կենտրոնի կուլտուրայի վերակառուցման անհրաժեշտությունը :

Կուս-դաստիարակչական և կուլտուրական աշխատանքի բայոր նյուղերի կուսակցական ղեկամարության ուժեղագումբ - այս է կուլտուրայի վերակառուց մաս հիմնական իմաստն ու նշանակությունը :

* * *

Ներկայումս Համկոմկուսի (բ) Կենտկոմի ապարա
տում արդեն ստեղծվել և աշխատում են հիմք նոր բա
ժիններ։ Ամարտվում է մարդկոմների, յերկոմների և
ազգային կոմկուսների կենտկոմների կուլտովրոպների
վերակառուցումը։ Այդ վերակառուցումն անց և կաց-
վում այնպես, վոր մարդկոմները, յերկոմները և ազ-
գային կոմկուսները՝ կենտկոմներն իրենք են նշում բա-
ժինների կառուցվածքն ու թիվը, բաժինների վարիչնե-
րի թեկնածուներ առաջադրում և ապա իրենց նախա-
գծերը ներկայացնում Համ. Կ(բ)Կ Կենտկոմի կազմբյու-
րոյի հանձնաժողովի քննությանը մազմբյուրոյի հանձ-
նաժողովը յուրաքանչյուր մարդի վերաբերյալ վերա-
կառուցման նախագծերը և առաջադրված թեկնածու-
ները ներկայացնում ե Համ. Կ(բ)Կ Կենտկոմին ի հաս-
տառություն։

Այսպիսով, հանրապետություններում, յերկրնե-
րում և մարդերում բաժինների թիվն ու նրանց կա-
ռուցվածքը վորոշվում է յուրաքանչյուր յերկրում ու
մարդում աշխատանքի կոնկրետ պայմանների հաշվա-
ման հիման վրա։

Մոսկվայի ու Լենինգրադի մարդկոմներում, որի
նակ, կուլտովրոպների փոխարեն կազմակերպմած ե 4
բաժին, բայց վորում գլորոցների և գիտական հիմ-
նարկների ղեկավարությունն իրագործվում և մենակ
գլորոցների և գիտության բաժնի կողմից։ Իսկ Մոս-
կվայի և Լենինգրադի քաղկոմներում ստեղծված ե 5
բաժին և գիտության բաժինը կազմակերպմած և ինք
նուրույն, վորովհետև Մոսկվայում ու Լենինգրադում
կան մեծ թվով գիտական հիմնարկներ, վորոնց կու-
սակցական ղեկավարությունը պահանջում է հասուկ
ապարատ։ Հիմք բաժին ունի նույնպես և Ռւկ(բ)Կ.
Կենտկոմը։

Ազով - Սևվծովյան յերկրում, Հյուսիսային Կով

կասում, Սվերդլովի մարզում և Արևմտյան Սիբիրում
կուլտովրոպների փոխարեն կազմակերպված և չորս
բաժին։

Մյուս մարզերում, վորոնք նվազ թվով շրջաններ
և նվազ բարել ազգային կազմ ունեն, կուլտովրոպի վո-
խարեն ստեղծված և յերեք բաժին՝ մի բաժնում կու-
սակցական պրովազանդի, ագիտացիայի և մամուլի,
մյուսում՝ գլորոցների ու գիտության ղեկավարությու-
նը միացնելու միջոցով, և յերրոք բաժինը — կուլ-
տուր - լուսավորական բաժինը — գոյություն ունի
բոլոր մարզկոմներում և յերկոմներում։

Մյուս ժամանակներու Համ. Կ. (բ) Կ. Կենտկո-
մում քննության և առնվելու քաղկոմների և շրջկոմ-
ների կուլտովրոպների վերակառուցման հարցը։

Այն հակառակությունը, վոր յերկոմների, մարզկոմնե-
րի և ազգային կոմկոմների կենտկոմների նոր բաժին
ների կառուցվածքը, շատաների և վարիչների յուրա
քանչյուր կազմակերպության գծով առանձին - առան
ձին հաստատվում են Համ. Կ. (բ) Կ. Կենտկոմի կող
մից, վոր նոր բաժինների համար առաջադրվում են
առենաստուգված աշխատադիները՝ կուսակցական աշ-
խատանիքի մեծ փորձով, ընդգծում և այն, թե ինչ-
պիսի խոշոր նշանակություն ե տալիս Համ. Կ (բ) Կ
կենտկոմի այս վերակառուցմանը, ինչքան լուրջ կեր-
պով և հիմնովին և դրվում բաղ-դաստիարակչական,
կուլտուրական, գիտական աշխատանիքի, դրացների
ու մամուլի կուսակցական ղեկավարության ուժեղաց
ման հարցը։

* * *

Համ. Կ. (բ) Կ. Կենտկոմի կուսակցական պրովա-
զանդի և ագիտացիայի նոր բաժինը կառուցված և
այլ կերպ, քան նախկին կուլտովրոպը։ Նա կառուց-
ված և աշխատանքի նոր խնդիրների համապատաս-
խան։

Կուսակցական պրոպագանդի և ագիտացիայի բաժնի վրա դրված և կուսակցության ներսում պրոպագանդիստական աշխատանքի (կուսակցական դպրոցների և խմբակների) զեկավարությունը. մասսայական ագիտացիայի և կուսարատի աշխատանքի զեկավարությունը. կոմբուների, պրոպագանդիստների ու ագիտատորների կազմերի պատրաստման, կարմիր պը բոփեստրայի ինստիտուտների և կուսակցական դասպետների համարակալության զեկավարությունը, նույնպես և պրոպագանդիստների ու ագիտատորների ակտիվի զեկավարությունը:

Սյապիսով, բաժնի կենտրոնական խնդիրը հանդի սանում և կուսակցական աշխատանքի ամենակարեղեքոր ճյուղերից մեկի՝ պրոպագանդի և ագիտացիայի զեկավարությունը: Իսկ այդ զեկավարությունը կարող է իրագործվել միայն այն պայմանով, վոր կուսակցական պրոպագանդի և ագիտացիայի բաժինն իմանալու, թե ինչպես և տարվում այդ աշխատանքը տեղերում, ձանաշի պրոպագանդիստների ու ագիտատորների կաղըրքին, մի խոսքով, յեթե նա սերտ կերպով կազմաձինի տեղական կուսակցական կազմակերպությունների աշխատանքի հետ: Մյուս բոլորն ել հենց վորոշել և կուսակցական պրոպագանդի և ագիտացիայի բաժնի կառուցվածքը:

Համ. Կ. (բ) Կ. կենտկոմի այս բաժինը, հիմնականում, կառուցվում է վորպես ճկում, համանդշական տիպի մի ապարատ, վորը շարունակ պետք է իմանալ, թե ինչպես և տարվում կուսակցական պրոպագանդն ու ագիտացիան տեղերում, վորն ընդունակ է ժամանակին նկատելու սխալներն ու թերություններն այդ աշխատանքում, վորը պետք է ստուգի տեղական կազմակերպությունների աշխատանքն այդ ասպարիզում:

Այդ պատճառով կուսակցական պրոպագանդի յեկ

ագիտացիայի բաժնի հիմնական, դիմացին մասն է հանդիսանում Համ. Կ. (բ) Կ. կենտկոմի պատասխանատու հրահանդիչների խմբակը պրոպագանդի գծով:

Մինչև հիմա Համ. Կ. (բ) Կ. կենտկոմի պարարտում կային պատասխանատու հրահանդիչներ, վորոնք գլխավորապես զբաղվում ենին կուսակցական պազմակերպչական աշխատանքով: Հիմա նրանց հետ միասեղ, ըսկեր ՍՏԱԼԻՆԻ ցուցմունքի հիման վրա, ստեղծված և պատասխանատու հրահասգիշմերի խըմբակ կուսակցական պրոպագանդի գծով: Այս հրահանդիչները կաշխատեն տեղիտորիալ սկզբունքով, մոտավորեն նույնպես, ինչպես կենտկոմի պատասխանատու հրահանդիչները՝ զեկավար կուսակցական որդան ների բաժնին կեց:

Այս հրահասգիշմերի խնդիրները պարզ են. նըրանք պետք է խմանան, թե ում կողմից և տարվում կուսակցական պրոպագանդը համապատասխան մարդերում և յերկըներում, պետք է ստուգեն այնտեղ այդ գործը, ժամանակին կենտկոմի առաջ զնեն պրոպագանդիստական աշխատանքի բարելավման, սխալների ու թերությունների ուղղման հարցերը, նրանք պետք է ողնեն նաև համապատասխան կազմակերպություններին:

Ագիտացիայի հարցերի գծով բաժնում կազմված և ագիտացիայի հատուկ սեկտոր:

Կուսակցական դասագրքեր ու ծրագրեր, պրոպագանդիստների համար ձեռնարկներ, կուսակցական դպրոցների ու խմբակների համար ծրագրեր ու ձեռնարկներ ստեղծելու ուղղությամբ տարկող աշխատանքի համար բաժնում կազմված և կուսակցական դասագրքերի ու ծրագրերի սեկտոր:

Կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտները, մարքսիզմ - լենինիզմի ինստիտուտները, կոմհամալսարանները և պրոպագանդիստների գլորցները զեկավարե-

լու Համար բաժինն ունի կուսակցական ուսումնական հիմնարկների սեկտոր:

Յեվ, վերջապես, բաժինն ունի պրոպագանդիստների ու ազրտատոքների հաշվառման և կադրերի սեկտոր:

Այդպիսին ե Համ.Կ(Բ)Կ կենտկոմի կուսակցական պրոպագանդի և ազիտացիայի բաժնի կառուցվածքը:

Ինչ վերաբերում ե կուսակցական պրոպագանդի և ազիտացլայի բաժինների աշխատանքի եյտությանը, այս խնդիրներին, վորոնք կասպնած են նրանց առաջ, ապա այս ուղղությամբ գոյություն ունեն ընկ. Սատ լինի ցուցմունքները, Համ.Կ(Բ)Կ 17-րդ համագումարի ընդունած կուսակցության կանոնադրության հասապատճախ կետերը, կենտկոմի վորոշումները, և սինդրոմի քաղկոմի 1935 թվի մարտի 29-ի վորոշումը, վորը հասակուսակցական նշանակություն ունի:

Էսպեր Մալինը կուսակցության 17-րդ համագումարում տված իր գեկուցման մեջ մատնանշեց, վոր անհրաժեշտ և «ուժեղացնել իդեոլոգիական աշխատանքը կուսակցության բոլոր ողակներում», վոր անհրաժեշտ և «տանել լենինիզմի անխոնչ պրոպագանդը կուսակցության շարքերում»:

«Ոստակա ժամանակում կատարվելիք պրոպագանդիստական աշխատանքի մասին» Համ.Կ(Բ)Կ կենտկոմի վորոշումը, նույնպես և Լենինգրադի քաղկոմի մարտի 29-ի վորոշումը մատնանշում են մի շարք լուրջ թերություններ, սխալներ, աղավաղումներ՝ ինչպես պրոպագանդիստական աշխատանքի կազմակերպման մեջ, այնպես ել նրա եյտության, նրա բովանդակության մեջ, առանձնապես կուսակցականների կողմից կուսակցության պատմությունն ուսումնակիրելու գործում:

«Մոտակա ժամանակում կատարվելիք պրոպագան

դիստական աշխատանքի մասին» Համ.Կ(Բ)Կ կենտկոմի վորոշումը դրա հետ միասին նշում ե կուսակցական պրոպագանդի նաև ավելի ճկում, ճյուղավորված ձևեր, վորոնք պետք ե հարմարեցվեն կուսակցության առանձին անդամների մակարդակին ու պահանջներին:

Այսպիսով, կուսակցական պրոպագանդի խնդիրների, բովանդակության տեսակետից բանը պարզ է այսուղի, — կուսակցական պրոպագանդի բաժինները պետք ե կատարեն Համ.Կ(Բ)Կ կենտկոմի և ընկ. Ստալինի միանգամայն վորոշակի և նշգրիտ դիրեկտիվները, սկսելով ե բարձրության վրա հանեն լենինիզմի պրոպագանդը կուսակցության շարքերում:

Հարցը նրանումն ե, թե ինչպես պետք ե անեն այդ, այլ խոսքով, ինչպես պետք ե աշխատեն կուսակցական պրոպագանդի և աղիտացիայի բաժինները, ինչի՞ց պետք ե սկսեն նրանք:

Կաշխատեմ կարճ կերպով կանգ առնել այս հարցի վրա:

Ամենից առաջ կուսակցական պրոպագանդի և աղիտացիայի բաժինները պետք ե արագ և վճռականութեն վերջ տան բոլոր և ամեն տեսակի թեթևամտություններին, շաղակարառության, ընդհանուր դատողություններին: Կուսակցականների քաղաքական դաստիարակությունն բարձրության վրա հանելու, այս գործում թերություններին ու սխալներին (իսկ այդ թերությունները և սխալները բավականաշատ չեն) վերջ տալու համար անհրաժեշտ և քրտնաջան, համառ կտպամկերպչական աշխատանք: Ամենավատ սկիզբը կը լինի, յեթե նոր բաժիններն այդ քրտնաջան կազմակերպչական աշխատանքի փոխարեն՝ իրենց յերեալը նշանակալից դարձնեն ընդհանուր դիրեկտիվներով և ցուցմունքներով, լայնախոստում բանաձևերով:

Կուսակցական պրոպագանդի և աղիտացիայի բա

ժիններն ամենից առաջ պետք ե իմանան, ուսումնասիրեն, թե ինչպես են աշխատում կուսակցական դըպ բոցներն ու խմբակները, ինչպես են ուսումնասիրվում այստեղ կուսակցության պատմությունը, լինինիզմը, քաղղրագիտությունը, ինչպես են տանում աշխատանքը պրոպագանդիստները, ճիշտ են համալրված արդյունք այդ խմբակները, թե՞ վոչ, ինչպես ե դեկավարում տեղական կուսակցական կոմիտեն քաղղաստիքական աշխատանքի դործը:

Թվում ե, թե այս՝ տարրական պայման ե: Այդ այդպես ե: Բայց, դժբախտաբար, մինչև հիմա «ընդհանուր» դեկավարության տրադիցիաները կենսունակ են դեռ, և պրոպագանդի շատ դեկավարներ փորձում են աշխատել՝ արհամարհելով այդ նախադրյալը: Իսկ դեկավարել առանց այս պայմանի, առանց իմանալու այն, թե ինչպես ե գործի դրությունը տեղերում, թե ինչ և ինչպես են խսկապես սովորում կուսակցության անդամները: — չի կարելի: առանց այդ անհնարին ե նույնպես ժամանակին ուղղել տապալումներն ու սըստաները:

Այս ուղղությամբ նոր բաժիններն աշխատանքը ևս պետք ե զնեն նոր ձեռվ, սերտորեն կապվելով կուսակցական կազմակերպությունների հետ:

Այն մարդկանց ճանաչումը, վորոնք պրոպագանդ են տանում դպրոցներում և խմբակներում, այսինքն պրոպագանդիստների կարելի նաև առանց աշխատանքի յերկրորդ պայմանն ե:

Պրոպագանդի և աղիստացիայի բովանդակությունն ու մակարդակը, դրանց վորակը վորոշվում ե հիմնականում նրանով, թե ով ե տանում աղիստացիան ու պրոպագանդան, վորոշում ե պրոպագանդիստով:

Այնինչ մինչև հիմա կուլտավորակները վատ են ճանաչել պրոպագանդիստներին, վատ են դրազվել նըստանց ընտրությամբ և դաստիարակությամբ: Իսկ

շրջկոմները մինչև հիմա չեն կատարում կենտկոմի վորոշումն այն մասին, վոր պրոպագանդիստները պետք ե հաստատվեն կուսակցության շրջկոմների բյուրոների կողմից: Դրա հետևանքով պրոպագանդիստների մեջ կան պատահական, չստուգված, քաղաքականապես անկայուն կամ պրոպագանդիստական աշխատանքի անընդունակ մարդիկ: Յեթ դրա հետ միասին շատ արժեքավոր, կայուն կուսակցականներ մի կողմ են կանգնած պրոպագանդիստական աշխատանքից:

Այդ պատճառով կուսակցական պրոպագանդի և աղիստացիայի բաժինների մոտակա և կարևորագույն խնդիրը կայանում ե նրանում, վորպեսզի նանաշնչն իրենց կադրերին, պարզեն, թե ովքեր են այդ կուսակցական պրոպագանդիստները, վորոնց վրա դրված ե կուսակցության անդամների քաղաքական լուսավորության ամենալուրջ խնդիրը, նրանց ընտրության և հաստատման մեջ կարգ հաջողեցնեն, ինչպես հարկն ե դընեն այդ կադրերի հաշվառումը, վոչ թե ընդհանուրդիմական, այլ անձնական հաշվառումը:

Միայն այս պայմանով կարելի յե կատարել նոր բաժինների վրա դրված խնդիրները:

Բայց պրոպագանդիստներին ու աղիստացիներին վոչ միայն պետք ե ճանաչել: Կուսակցական պրոպագանդի և աղիստացիայի բաժինները նրանց համար պետք ե կազմակերպեն սիստեմատիկ ոգիություն, նրանք պետք ե աճեցնեն նրանց:

Պրոպագանդիստները շատ կարիք ունեն այդ նույնության: Մեր պրոպագանդիստների մեծամասնությունը չունի բավականաչափ աշխատանքի փորձ և հիմնական պահանջների: Հաճախ այդ շատ այլանդակ ե նրանք պարապմունքներին պատրաստվում են նույն այն դասագրքերով, վորոնք կարգում են և խմբակի անդամները: Միայն նրանցից քչերն են, վոր կարողա

նուժ են պարապմունքների մեջ ընդդրկել տեղական կուսակցական կազմակերպության հյանքից վերցրած նյութեր, լուսաբանել համապատասխան հարցերը պատմությունից վերցրած որինակներով, հիշողություններով, գեղարվեստական յերկերի քաղվածքներով:

Պրոպագանդիստների և աղիտատորների հետ անհրաժեշտ է սիստեմատիկաբար աշխատել, հրահանդել նրանց, ուղղել նրանց սիստեմները և ոգնել նրանց հատուկ դասախոսություններով, սեմինարներ կազմակերպելով, կուսկաբինետներին կից կոնսուլտացիաներ կազմակերպելով:

Այս աշխատանքը վատ ե դրված: Վերջին ժամանակներս մի քանի կազմակերպություններում, նույնիսկ Մուկվայի շրջաններում, պրոպագանդիստների սեմինարներն սկսել են վատ աշխատել: Գտնվել են վայ-զեկավարներ, վորոնք վորոշել են, թե քանի վոր խըմբակները հիմա աշխատում են զանազանակերպ և դըտնվում են ծրագրի անցման տարբեր ստուժանների վը րա, ապա այդ պատճառով իզուր ե պրոպագանդիստների սեմինարներ կազմակերպելը:

Այս ամենավասար հայցքն ե: Պրոպագանդիստների հետ աշխատելուց, նրանց ղեկավարելուց հրաժարվելու—դա հանցադորդություն ե: Զի կարելի հանդուժել այնպիսի ղեկավարներին, վորոնք իրենց կարձատեսությունը, պրոպագանդիստին ոգնելու իրենց անկարողությունը և չցանկանալը քողարկում են նըման դատողություններով:

Իհարկե, հիմա պրոպագանդի ցանցն ավելի տարբերականացրած ե դառնում: Պրոպագանդիստին ոգնություն կազմակերպելն ավելի բարդ ե: Բայց այս տեղից հետևում ե լոկ այն, վոր այդ բանի վրա հարկա վոր և ավելի շատ աշխատել և կիրառել ավելի ճկույթիցներ:

Յեվ այդ պատճառով պրոպագանդիստների ընդհանուրը սեմինարների հետ միատեղ, սեմինարներ, վորոնք պետք ե ծառայեն նրանց վորակի բարձրացման, ինչպես համապատասխան հարցերի, այնպես ել այդ հարցերի վերաբերյալ խմբակներում անցկացվելիք պարապմունքների մեթոդների յուրացման բարեկալման նպատակներին, — այդ սեմինարների հետ միատեղ խոչոր նշանակություն ե ստանում կուսկաբինետներին կից կոնսուլտացիան պրոպագանդիստների համար:

Շրջկոմում, ճեռնարկությունում կուսկաբինետը և ինքը կուսակցական պրոպագանդի ու ազիտացիայի բաժինը պետք ե լինեն այնպիսի տեղեր, որ յուրաքանչյուր պրոպագանդիստ կարող ե զալ խորհրդի համար, թե ինչպիս կարող ե ավելի լավ անցիացնել այս կամ այն սպառավունքը, ինչպիս մումբնուների վոր պետք ե առանձին ուշադրություն դարձնել, թե ինչպիս պատասխանել կուսակցականների այս կամ այն տարակուսական հարցերին, ինչպես կագրել պարապմունքների պլանը:

